Ուղեցույց

Ինչ է պետք իմանալ Պետական և ՏԻՄ մարմինների հետ առնչվելիս

Հունվար, 2020թ.

Սույն ուղեցույցը ֆինանսավորվել է «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան դրամաշնորհի շրջանակներում: Այս կայքում/ուղեցույցում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան հետ պարտադիր չէ

1. **Արդյո՞ք սահմանափակված են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրենց գործողություններում**

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Նշված մարմինների և պաշտոնտար անձանց կողմից Սահմանադրությամբ կամ օրենքով չնախատեսված գործողություն իրականցնելը կարող է հանգեցնել պատասխանատվության, այդ թվում՝ քրեական:

2. **Արդյո՞ք մարդը սահմանափակված է իր գործողություններում**

Ի հակառակ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց՝ անհատ անձն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

3. **Ի՞նչ սահմանափակման է ենթարկվում հանրային իշխանությունը**

Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

4. **Ի՞նչ ակտերով է երաշխավորվում արդյունավետ դատական պաշտպանության իրավունք և ինչ է այն ենթադրում**

Իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը երաշխավորված է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ հռչակված է միջազգային մի շարք հանրաճանաչ փաստաթղթերում, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում:

Արդյունավետ դատական պաշտպանության անձի իրավունքը ենթադրում է մի կողմից օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով

5. **Բացի ներպատական մարմիններից, որտե՞ղ կարող է դիմել անձը իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցերով**

Յուրաքանչյուր ոք, ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:

6. **Կարո՞ղ է անձը ակնկալել հատուցում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործողություններով պատճառված վնասի համար**

Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք:

7. **Ոչ իրավաչափորեն դատապարտված անձը կարո՞ղ է ակնկալել հատուցում ստանալու իրավունք**

Եթե հանցանք կատարելու համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձն արդարացվել է այն հիմքով, որ նոր կամ նոր երևան եկած որևէ հանգամանք ապացուցում է նրա դատապարտման ոչ իրավաչափ լինելը, ապա այդ անձն ունի օրենքին համապատասխան հատուցում ստանալու իրավունք, եթե չի ապացուցվում, որ այդ հանգամանքի ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:

8. **Ո՞ր դեպքում կարող է օգտագործվել է մարդու հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցները**

Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

9. **Ո՞ր դեպքում անձը պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ**

Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է

օգտագործվել իր կամ նրանց դեմ: Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում:

10. Ո՞վքեր չեն կարող քրեական վարույթի շրջանակներում կանչվել և հարցաքննվել որպես վկա

Որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել՝

1) անձինք, որոնք ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով ունակ չեն ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները.

2) փաստաբանները՝ պարզելու համար տեղեկություններ, որոնք նրանց կարող են հայտնի լինել կապված իրավաբանական օգնության դիմելու կամ նման օգնություն ցույց տալու հետ.

3) անձինք, որոնց տվյալ քրեական գործին վերաբերող տեղեկությունները հայտնի են դարձել քրեական գործով որպես պաշտպան, տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչ մասնակցելու կապակցությամբ.

4) դատավորը, այդ թվում նաև՝ լիազորությունները դադարեցված, դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը և դատական նիստի քարտուղարը՝ կապված այն քրեական գործի հետ, որում նրանք իրականացրել են իրենց դատավարական լիազորությունները, բացառությամբ տվյալ գործի վարույթի ընթացքում թույլ տրված սխալների և չարաշահումների քննության, նոր ի հայտ եկած հանգամանքներով տվյալ գործի նորոգման կամ կորցրած վարույթի վերականգնման դեպքերի.

5) ձեռնադրված հոգևորական-խոստովանահայրը՝ խոստովանանքից իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին.

6) մարդու իրավունքների պաշտպանը՝ իր պարտականությունները կատարելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին:

11. Անձը պարտավո՞ր է ապացուցել իր անմեղությունը հանցագործության կատարման առնչությամբ

Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի ՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Անձի մեղավորության ապացուցման պարտականությունը դրված է վարույթն իրականացնող մարմնի վրա, դրան զուգահետ անձը իրավունք ունի իրականացնել իր պաշտպանությունը մեղադրանքից:

12. Ո՞ր դեպքում է հնարավոր, որ անձը դատապարտվի նույն արարքի համար

Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար, սակայն այս արգելքը չի խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա:

13. Ի՞նչ նվազագույն իրավունքներ է երաշխավորում Սահմանադրությունը քրեական մեղադրանքից պաշտպանվող անձի համար

Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.

2) անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք.

3) իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք.

4) իր դեմ ցուցմունք տվող անձանց հարցման ենթարկելու իրավունք, կամ որ այդ անձինք ենթարկվեն հարցման, ինչպես նաև, որ իր օգտին ցուցմունք տվող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված անձինք.

5) թարգմանչի անվճար ծառայությունից օգտվելու իրավունք, եթե նա չի տիրապետում հայերենին

14. Արդյո՞ք անձը կարող է պահանջել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից իրեն առնչվող գործերով իրականացնել պատշաճ վարչարարություն

Սահմանադրությունը երաշխավորում է, որ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

15. Անձն իրավունք ունի՞ վարչական վարույթի ընթացքում ծանոթանալ իրեն վերաբերող փաստաթղթերին

Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:

16. Կարո՞ղ է արդյոք անձն ակնկալել վարչական վարույթի ընթացքում լսված լինել

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

17. Ո՞ր դեպքում անձը կարող է ակնկալել Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը

Անձը կարող է դիմել և ակնկալել Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, և հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտումների առնչությամբ:

18. Ի՞նչ է հանրագիրը

Հանրագիր է համարվում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրային նշանակություն ունեցող հարցերով ներկայացվող գրությունը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության թերությունների մասին հաղորդումը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության բարելավման, տնտեսական, քաղաքական, սոցիալական և հասարակական կյանքի այլ ոլորտների վերաբերող հարցերի կարգավորման կամ գործող իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունը:

Սահմանադրությունը երաշխավարում է, որ յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք

19. Կարո՞ղ է արդյոք անձը դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց նրանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու համար

Սահմանադրությունը երաշխավորում է, որ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք

20. Ո՞ր դեպքերում է մերժվում տեղեկություններ ստանալու անձի պահանջը

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, մերժում են տեղեկության տրամադրումը, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.

2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.

4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները։

21. Որ դեպքում չի կարող մերժվել տեղեկատվության տրամադրումը

Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝

1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին.

2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.

3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայատանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա։

22. Առնվազն ի՞նչ տեղեկատվություն են պարտավոր հրապարակել պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունները և դրանց պաշտոնատար անձինք

Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները, բյուջեներից ֆինանսավորվող

կազմակերպությունները, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունները և դրանց պաշտոնատար անձինք տարին առնվազն մեկ անգամ պարտավոր են հրապարակել իրենց գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները.

1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները.

2) բյուջեն.

3) գրավոր հարցումների ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները.

4) հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները.

5) աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերը.

6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը.

7) հասարակական միջոցառումների ծրագրերը.

8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը.

9) աշխատանքների և ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները).

10) տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը.

11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը.

12) նշված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները.

13) նշված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

23. Ո՞ր նորմն ունի առավել բարձր իրավաբանական ուժ

Հայաստանի Հանրապետությունում ամենաբարձր իրավաբանական ուժն ունի Սահմանադրությունը: Մյուս բոլոր նորմերը՝ սահմանադրական օրենքները, օրենքները, ՀՀ կառավարության որոշումները և այլ ենթաօրենսդրական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը:

Միջազգային պայմանագրերերը ՀՀ-ի կողմից չեն կարող վավերացվել, եթե դրանք հակասում են Սահմանադրությանը, սակայն վավերացվելու դեպքում միջազգային պայմանագրերն առավել բարձր իրավաբանական ուժ ունեն քան Հայաստանի Հանրապետության ներպետական օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը:

24. Կարող է արդյո՞ք անձը դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի Հայաստանի Հանրապետությունում

Ոչ: Սահմանադրությունն արգելում է որևէ մեկին դատապարտել կամ ենթարկել մահապատժի:

25. Ո՞ր դեպքում կարող է սահմանափակվել անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը

Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

26. Կարո՞ղ է արդյոք խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկվելը համարվել իրավաչափ

Անձին խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելը որևէ պարագայում չի կարող դիտարկվել իրավաչափ՝ նույնիսկ պետական և հասարակական անվտանգության ապահովման, հանցագործությունների կանխման կամ բացահայտման անհրաժեշտության դեպքում:

Մարմնական պատիժները ևս արգելվում են:

27. Ո՞ր դեպքերում անձը կարող է իրավաչափորեն զրկվել անձնական ազատությունից

Անձը կարող է անձնական ազատությունից զրկվել միայն հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

1) անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար.

2) դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար.

3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով.

6) հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով.

7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

28. Ի՞նչ նվազագույն իրավունքներ է սահմանված անձնական ազատությունից զրկված անձի համար Սահմանադրությամբ

Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝

Ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացված լինելու ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին,

Բ) ազատությունից զրկվելու մասին անհապաղ տեղեկացնել իր ընտրած անձին (այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:

Գ) անհապաղ ազատ արձակվելու, եթե քրեական հանցանք կատարելու կասկածանքի հիմքով ազատության զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին,

Դ) վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը:

29. Կարո՞ղ է արդյոք անձը զրկվել անձնական ազատությունից քաղաքացիաիրավական պարտավորությունները կատարելն ի վիճակի չլինելու պատճառով

Սահմանադրությունը երաշխավորում է, որ ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները

30. Ո՞ր դեպքերում կարող է սահմանափակվել մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության անձի իրավունքը

Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

31. Ո՞ր դեպքերում կարող է սահմանափակվել բնակարանի անձեռնմխելիության իրավունքը

Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

32. Ի՞նչ երաշխիք է տալիս Սահմանադրությունը բնակարանի խուզարկության առնչությամբ

Սահմանադրությունը, հռչակելով յուրաքանչյուր անձի բնակարանի անձեռնմխելիության իրավունքը և նախատեսելով այդ իրավունքի սահմանափակման հնարավոր հիմքերը, միաժամանակ որպես երաշխիք սահմանել է, որ բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ, ընդ որում՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

33. Ի՞նչ է ենթադրում հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը և ո՞ր դեպքերում կարող են դրանք սահմանափակվել

Հաղորդակցության ազատությունը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատություն և դրանց գաղտնիության իրավունք:

Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

34. Ի՞նչ երաշխիք է տալիս Սահմանադրությունը հաղորդակցության գաղտնիության սահմանափակման առնչությամբ

Սահմանադրությունը նախատեսում է հաղորդակցության գաղտնիության սահմանափակում միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով:

35. Արդյո՞ք պաշտպանված են մարդու անձնական տվյալները և ի՞նչ պահանջներ կան դրանց մշակման առնչությամբ

Սահմանադրությունը երաշխավորում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք, իսկ անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:

36. Արդյո՞ք անձն ունի իրավունք ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին

Յուրաքանչյուրն իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին, ավելին՝ պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:

Անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

37. Ովքե՞ր ունեն իրավունք ամուսնանալու և ընտանիք կազմելու և ինչպես է կնքվում ամուսնությունը

Ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն ամուսնական տարիքի հասած՝ տասնութ տարեկանը լրացած կինը և տղամարդը միմյանց հետ՝ փոխադարձ կամավոր համաձայնությամբ: Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, ինչպես նաև՝ 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է:

Ամուսնությունը կնքվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ամուսնացող անձանց պարտադիր ներկայությամբ:

38. Երբ են ծագում ամուսնության հետ կապված անձի իրավունքներն ու պարտականությունները

Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծագում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնության պետական գրանցման պահից:

39. Ո՞ր դեպքում է արգելվում գրանցել ամուսնությունը

Արգելվում է ամուսնություն կնքել՝

ա) այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկը գտնվում է օրենքով սահմանված կարգով գրանցված մեկ այլ ամուսնության մեջ.

բ) մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև.

գ) որդեգրողների և որդեգրվածների միջև.

դ) այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկին դատարանը ճանաչել է անգործունակ:

40. Որո՞նք են ծնողների իրավունքները և պարտականությունները

Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին: Ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ:

41. Ինչպե՞ս և ո՞ր դեպքերում կարող են անձին զրկել ծնողական իրավունքներից

Ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից միայն դատարանի որոշմամբ՝ երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով, եթե նրանք՝

1) մեկ տարի անընդմեջ չարամտորեն խուսափում են ծնողական պարտականությունները կատարելուց, այդ թվում՝ ալիմենտ վճարելուց.

2) չեն փոխում իրենց վարքագիծը ծնողական իրավունքների սահմանափակման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում.

3) առանց հարգելի պատճառի հրաժարվում են վերցնել իրենց երեխային ծննդատնից կամ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններից.

4) մեկ տարի առանց հարգելի պատճառի հրաժարվում են վերցնել իրենց երեխային դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ հաստատություններից.

5) չարաշահում են իրենց ծնողական իրավունքները, այդ թվում՝ իրենց վարքագծով վնասակար ազդեցություն են գործում երեխայի վրա.

6) տառապում են քրոնիկ ալկոհոլամոլությամբ, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ.

7) տառապում են քրոնիկ հոգեկան հիվանդություններով, որոնց ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

8) դաժանաբար են վարվում երեխայի հետ, մասնավորապես՝

ա. պարբերաբար այնպիսի ֆիզիկական բռնություն են գործադրում նրա նկատմամբ, որը չի պարունակում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի հատկանիշներ,

բ. պարբերաբար հոգեբանական բռնություն են գործադրում նրա նկատմամբ, այն է՝ դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական բռնություն գործադրելու սպառնալիքը, արժանապատվության պարբերական նվաստացումը:

Ծնողը զրկվում է ծնողական իրավունքներից նաև, եթե դատապարտվել է իր երեխայի դեմ ուղղված դիտավորյալ հանցագործության համար:

Վերը նշված 1-ին, 3-րդ և 4-րդ դեպքերը ծնողական իրավունքներից զրկելու հիմք չեն, եթե ծնողը գտնվում է բժշկական հաստատությունում, կարգապահական գումարտակում, ուղղիչ հիմնարկում, ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում, մասնակցում է վարժական հավաքներին կամ գտնվում է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ, մարտական գործողությունների ընթացքում զինված ուժերի կազմում, գերության մեջ, մեկնել է օտարերկրյա գործուղման, եթե ծնողական իրավունքներից զրկելը չի բխում Երեխայի լավագույն շահերից: Դատարանը, որպես հարգելի պատճառ, կարող է դիտարկել նաև այլ իրավիճակներ:

42. Արդյո՞ք չափահաս զավակը պարտավոր է հոգ տանել իր ծնողների մասին

Սահմանադրությունը սահմանում է, որ չափահաս աշխատունակ զավակները պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների մասին:

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում օգնության կարիք ունեցող ծնողների համար նրանց չափահաս աշխատունակ զավակներից ալիմենտը բռնագանձվում է դատական կարգով:

Ընդ որում, անաշխատունակ կամ նյութական օգնության կարիք ունեցող ծնողին դատարանի վճռով ապրուստի միջոցներ վճարելուց երեք ամսից ավելի չարամտորեն խուսափելը հանգեցնում է քրեական պատասխանատվության:

43. Ի՞նչ իրավունքներ ունեն երեխաները

Երեխաներն ունեն ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին:

Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, իր շահերի ապահովության, համակողմանի զարգացման, իր մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք:

Ծնողների բացակայության, նրանց ծնողական իրավունքներից զրկված լինելու և ծնողական հոգատարությունից զրկվելու այլ դեպքերում ընտանիքում դաստիարակվելու երեխայի իրավունքն ապահովում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

Երեխան իրավունք ունի նաև իր ծնողների, պապերի և տատերի, եղբայրների, քույրերի, ինչպես նաև այլ ազգականների հետ շփվելու, պաշտպանության իրավունք, սեփական կարծիքն արտահայտելու իրավունք, անուն, հայրանուն և ազգանուն ունենալու իրավունք, ինչպես նաև գույքային և այլ իրավունքներ:

44. Ո՞վ(քեր) կարող են իրականացնել երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը

Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնում են ծնողները (օրինական ներկայացուցիչները), իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը:

Օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ ճանաչված անչափահասն իր իրավունքները (ընդ որում՝ պաշտպանության իրավունքը) և պարտականությունները ինքնուրույն իրականացնելու իրավունք ունի:

45. Ի՞նչ երաշխիքներ է սահմանում Սահմանադրությունը կրթության ոլորտում

Սահմանադրությունը երաշխավորում է, որ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք, և որ պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

Սահմանադրություն սահմանում է նաև, որ յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:

46. Արդյո՞ք անձը կարող է ազատ տեղաշարժվել Հայաստանի Հանրապետության տարածքում և դուրս գալ երկրից

Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք և յուրաքանչյուրն ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք: Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունք:

47. Ո՞ր դեպքերում կարող է սահմանափակվել ազատ տեղաշարժի իրավունքը

Ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: ՀՀ քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ:

48. Ի՞նչ է իր մեջ ներառում մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքը

Մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը:

49. Ի՞նչ է իր մեջ ներառում կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը

Կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

50. Ի՞նչ երաշխիքներ է նախատեսում Սահմանադրությունը կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի առնչությամբ

Սահմանադրությամբ երաշխավորված է մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:

51. Կարող է արդյո՞ք սահմանափակվել կարծիքի արտահայտման ազատությունը

Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

52. Ի՞նչ է ներառում հավաքների ազատությունը

Հավաքների ազատությունը երաշխավորում է, որ յուրաքանչյուր ոք կարող է ազատորեն մասնակցել և կազմակերպել խաղաղ, առանց զենքի հավաքներ:

53. Արդյո՞ք պարտադիր է հավաքի կազմակերպման վերաբերյալ իրազեկումը

Մինչև 100 մասնակից ունեցող, շտապ և ինքնաբուխ հավաքների իրականացման համար իրազեկում չի պահանջվում, մյուս բոլոր դեպքերում բացօթյա տարածքներում կազմակերպվող հավաքներն օրենքով սահմանված դեպքերում անցկացվում են հավաքի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ հավաքի անցկացման վայրի համայնքի ղեկավարին ներկայացված իրազեկման հիման վրա:

54. Ի՞նչ նպատակով է ներկայացվում հավաքի վերաբերյալ իրազեկումը

Իրազեկման նպատակը պետության կողմից հավաքի բնականոն և խաղաղ ընթացքն ապահովելու, ինչպես նաև այլ անձանց հիմնական իրավունքների ու հանրության շահերի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելն է:

55. Ո՞ր դեպքերում կարող է սահմանափակվել հավաքների ազատությունը

Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական

կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

56. Կարո՞ղ են արդյոք մի խումբ անձինք ստեղծել միավորումների

Յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք:

57. Կարո՞ղ է արդյոք անձին հարկադրվել անդամագրվել որևէ մասնավոր միավորման

Սահմանադրությունը երաշխավորում է, որ ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման:

58. Կարող է արդյոք միավորումների գործունեությունը կասեցվել կամ արգելվել

Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել բացառապես օրենքով սահմանված դեպքերում և կարգով և միայն դատարանի որոշմամբ:

Միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

59. Կարո՞ղ են արդյոք կուսակցություն ստեղծել կամ կուսակցության անդամագրվել ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք

Այլ քաղաքացիների հետ կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքը Սահմանադրությամբ վերապահված է բացառապես ՀՀ քաղաքացիություն ունեցող անձանց: Օտարերկրացիները և քաղաքացիություն չունեցող անձինք չեն կարող ստեղծել և անդամագրվել կուսակցությունների:

60. Ի՞նչ հիմքերով կարող է արգելվել կուսակցության գործունեությունը

Սահմանադրությունն արգելում է այն կուսակցությունների գործունեությունը, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով:

61. Ի՞նչ երաշխիք է սահմանված կուսակցությունների գործունեության կասեցման առնչությամբ

Սահմանադրությունը երաշխավորում է, որ կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել միայն օրենքով սահմանված դեպքերում Սահմանադրական դատարանի որոշմամբ:

62. Ովքե՞ր ունեն համապետական ընտրություններին կամ հանրաքվեների մասնակցելու իրավունք

Ազգային ժողովի ընտրություններին կամ հանրաքվեների մասնակցելու իրավունք ունեն Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն:

63. Ո՞վ կարող է ընտրվել ԱԺ պատգամավոր

Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

64. Ովքե՞ր ունեն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը վեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում՝

1) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները.

2) մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու կամ ազատազրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված.

3) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիություն չունեցող ընտրող):

65. Արդյո՞ք ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն անգործունակ ճանաչված անձինք և դատապարտյալները

Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն:

Այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք թեև չունեն ընտրվելու իրավունք, սակայն իրավունք ունեն ընտրելու և մասնակցելու հանրաքվեին:

66. Ո՞ր դեպքում անձը չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը

Որևէ անձ չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել մահապատժի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

67. Ի՞նչ նվազագույն իրավունքներ է երաշխավորում Սահմանադրությունն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար

Սահմանադրությունը երաշխավորում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք:

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:

68. Ո՞ր մարմինն է իրականացնում աշխատանքային իրավունքների պաշտպանության

Աշխատանքային իրավունքների պաշտպանությունը իրականացնում են ընդհանուր իրավասության դատարանները:

69. Ի՞նչ նպատակներով կարող է իրականացվել գործադուլ

Տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով աշխատողներն իրավունք ունեն իրականացնելու գործադուլ:

70. Ո՞ր դեպքերում կարող է սահմանափակվել սեփականության իրավունքը

Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

71. Ո՞ր դեպքում և ինչ կարգով անձը կարող է զրկվել սեփականությունից

Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

72. Կարո՞ղ են օգտվել հողի սեփականության իրավունքից օտարերկրացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ՀՀ-ում

Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք չեն օգտվում հողի սեփականության իրավունքից, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: